

**Մաթեմատիկա**  
**2016 – 2017**  
**6-րդ դասարան**

*Անհնար է հզոր պետականություն առանց հզոր մաթեմատիկայի՝  
 Նասրուդդին Բոնապարտ*

1. Գտնել օրինաչափությունը և լրացնել բաց թողնված թվերը. /4 միավոր/



ա) 1, 5, ?, 39, ?

բ) 1, 5, 4, 12, 7, 19, 10, 26, ?, ?, ?

2. Աստղանիշերի փոխարեն այնպիսի թվանշաններ տեղադրիր, որ գործողությունը ճիշտ լինի:  
 /3միավոր/

				*	*	*			
			x						
					*	8			
					*	*	*		
	+								
		*	*	*	5				
		*	*	*	*	0			

3. ABCD ուղղանկյան պարագիծը 10 սմ է, CDEF ուղղանկյան պարագիծը՝ 16 սմ, FGHE ուղղանկյան պարագիծը՝ 12 սմ, իսկ ABGH ուղղանկյան պարագիծը՝ 22 սմ: Գտնել CD հատվածի երկարությունը: /3 միավոր/



4. Անբարեխիղճ աշակերտները գրքի տարբեր տեղերից պոկեցին 14 թերթ և պոկած էջերի համարները գումարեցին իրար: Արդյունքում մեկը ստացավ 2016, իսկ մյուսը՝ 2017: Հնարավո՞ր է այդպիսի արդյունքներ: Պատասխանը հիմնավորել: /3 միավոր/

5. 270 հոգու համար նախատեսված դահլիճում ներկայացմանը ներկա գտնվող հանդիսատեսների 17 %-ը գերմանացիներ են, 22,5 %-ը՝ ֆրանսիացիներ, իսկ մնացածը՝ հայեր: Քանի՞ հայ կա դահլիճում: /3 միավոր/

6. Եթե հետիոտն A կետից դուրս գա ժամը 8:00 –ին, ապա B կետ կհասնի ժամը 12:00-ին: Այսպիսով, I հետիոտնը A կետից դուրս եկավ ժամը 8:00-ին, իսկ II հետիոտն B կետից դուրս եկավ ժամը 9:00-ին: Ժամը քանիսին նրանք կհանդիպեն, եթե շարժվեն հաստատուն նույն արագությամբ:  
/4 միավոր/

ՄԱՂԹՈՒՄ ԵՆՔ ՀԱՋՈՂՈՒԹՅՈՒՆ

Անուն, ազգանուն, հայրանուն \_\_\_\_\_

Դպրոց \_\_\_\_\_

Դասարան \_\_\_\_\_